

Բնապահպանություն

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն մարզի վարչական սահմանում նախատեսվող գործունեության հասարակական լուսմները և մարզպետարանի բնապահպանության բաժնի կողմից կազմակերպվող միջոցառումները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում, ազդակիր համայնքներում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Տվյալ միջոցառումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ: Այդ միջոցառումների ընթացքի և արդյունքների վերաբերյալ նյութերը եթեր են հեռարձակվում «Ֆորտունա» մարզային հեռուստաընկերության «Մարզպետարանի ժամ» հաղորդումների ընթացքում և հրապարակվում են մարզպետարանի, Օրհուս կենտրոնների և այլ կազմակերպությունների էլեկտրոնային կայքերում: Տվյալ ձևաչափը հնարավորություն է տալիս հաշվի առնել ՀԿ-ների և հանրության տեսակետները, բողոքները ու առաջարկությունները: Նշենք 2015թ. ընթացքում իրականացված առավել կարևոր միջոցառումներից մի քանիսը.

- Արջուտի, Ֆիոլետովոյի, Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերի շահագործման և ինֆրակառույցների զարգացման հեռանկարների վերաբերյալ;
- Վանաձոր-Բագրատաշեն (Մ6) վերակառուցման ՇՄԱԳ-ի բնապահպանական զեկույցի ներկայացում՝ տեղի է ունեցել երեք քննարկում;
- «Յաղդան» ՓՀԷԿ-ի վերազինման նախագծի նախնական գնահատման հայտի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում;
- Ծաղկաշատ-Ախետքի պղինձ-մոլիբդենային հանքային դաշտի տեղամասում օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտի շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկում;
- Մղարթ-Հագվի-Մեծ ձոր հանքային դաշտի Մղարթ և Հագվի տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկում և այլն:
- «Կեղտաջրի մաքրման այլընտրանքային մոտեցումներ» մարզային սեմինար;
- Վանաձորի քիմիական գործարանի թափոնակուտակիչի պարունակության, պահպանության և հնարավոր օգտագործման հեռանկարին նվիրված հանդիպում-քննարկում;
- Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ/EITI) նվիրված հանդիպում-քննարկում;
- ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագրի քննարկում;
- Ալավերդու Օրհուս կենտրոնում մասնակցություն է եղել «Համայնքի և տարածաշրջանի բնապահպանական խնդիրներ, համայնքներին հատկացվող բնապահպանական սուբվենցիաներ» թեմայով կազմակերպված հանդիպումներին;
- Մարզի հանքարդյունաբերական կենտրոններում (Ալավերդի, Թեղուտ, Արմանիս, Ախթալա) պարբերաբար անց են կացվում լեռնաարդյունաբերական գործունեության

հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և դրանց մեղմացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ: Հանդիպումներին մասնակցում են թիրախային համայնքների ղեկավարներ, ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ՋԼՄ-ների, պետական կառույցների, ինպես նաև հիմնարկ-ձեռնակությունների և այլ շահառու կողմերի ներկայացուցիչներ:

- Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնի (տեխնոպարկի) ստեղծման աշխատանքներին ակտիվ մասնակցություն և առաջարկությունների ներկայացում;
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և գումարային ազդեցության գնահատման հակիրճ ներկայացում երկօրյա սեմինար-դասընթաց;
- Հանքարդյունաբերության ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով իրազեկության բարձրացման հանդիպում-քննարկում:

Մասնակցություն է եղել «Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշտվետվողականության խթանում» ծրագրի աշխատանքներին:

Մասնակցություն է եղել «ԴԵՊԻ ՓԱՐԻՉ՝ Հայաստանը Կլիմայի փոփոխության կոնվենցիայի Կողմերի 21-րդ նստաշրջանի նախաշեմին» կոնֆերանսի աշխատանքին:

Մասնակցություն է եղել «Ձիկատար» բնապահպանական կենտրոն ՊՈԱԿ-ի «Ձիկատար» ուսումնական կենտրոնում կայանալիք «Անտառային հրդեհների մարում հոսքային ջրերով՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ» ծրագրի ավարտական սեմինարին:

Քննարկվել և համապատասխան առաջարկություններ են ներկայացվել բնապահպանական օրենսդրությանը վերաբերվող մի շարք նախագծերի վերաբերյալ:

ՀՀ Լոռու մարզպետի մոտ պարբերաբար տեղի են ունենում խորհրդակցություններ, որտեղ քննարկվում են մարզի բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղվածությունները:

Մարզի երեք Օրիուս կենտրոններում անց են կացվել բնապահպանական դասընթացներ, սեմինարներ, հասարակական լուծումներ, հանրային քննարկումներ և այլ միջոցառումներ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 1620 քաղաքացիներ:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոններում կազմակերպվել են «Հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին. Հիմնախնդիրներ և հեռանկարներ», «Տարերային աղետների ռիսկի իջեցում», «Կլիմայի փոփոխության հնարավոր հետևանքները», «Անտառների պահպանության հիմնախնդիրները», «Անտառային և չոր խոտածածկույթի հրդեհների հիմնախնդիրները», «Հայաստանում բնական հանքային և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը», «Ամանորի համար Այլընտրանքային տոնածառների պատրաստում» և այլ թեմաներով հանրային լուծումներ, քննարկումներ, սեմինարներ և դասընթացներ: Կենտրոններում նշվում են տարբեր միջազգային բնապահպանական օրեր՝ ջրի համաշխարհային օրը, երկրի օրը և այլն:

Կենտրոնները համագործակցում են տարբեր միջազգային կառույցների, ՋԼՄ-ների, ՀԿ-ների, ՏԻՄ-երի, բիզնես սեկտորի և այլ շահագրգիռ կառույցների հետ՝ շեշտը դնելով առաջնահերթ բնապահպանական խնդիրների ֆունդամենտալ լուծումների և էկոլոգիական անվտանգության կարևորության վրա:

Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժնի մասնագետները մարզի Օրիուս կենտրոնի համակարգողների հետ համատեղ կազմակերպել են ակտիվ երիտասարդների այցելություններ դեպի Լոռու մարզի բնության հուշարձաններ: Այցելությունները նպատակ էին հետապնդում երիտասարդության շրջանում ի թիվս այլ խնդիրների բարձրացնել նաև

իրազեկությունը և հոգատարությունը դեպի բնության հատուկ պահպանվող տարածքներն ու հուշարձանները:

Մարզի Օրիուս կենտրոնները մեծապես աջակցում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և անցկացված փորձաքննությունների վերաբերյալ հասարակությանը իրազեկելու, հասարակության մասնակցությունը ապահովելու, նրանց շահերը պաշտպանելու, հասարակական լուծումներ կազմակերպելու և այլ բնապահպանական միջոցառումներ անցկացնելու գործընթացներում:

Մարզի Օրիուս բնապահպանական-տեղեկատվական կենտրոնների գործունեությանը առավել մանրամասն ծանոթանալու համար կարող եք այցելել <http://aarhus.am> ինտերնետային կայք:

Բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքների արդյունքները վկայում են, որ տեղի է ունեցել հասարակության և պետական լիազոր մարմինների երկխոսություն, որի արդյունքում ընդունվել են երկկողմանի համադրելի որոշումներ, ինչպես նաև բարձրացել է հասարակության և ՀԿ-ների իրազեկության և որոշումների ընդունմանը մասնակցության մակարդակը:

Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի 2015թ. իրականացվել է 61.2 հա անտառտնկում, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնադրված 380 հա անտառմշակույթների խնամք:

Նույն ծրագրով նախատեսվում է 180 հա պտղատու այգիների հիմնման աշխատանքներ իրականացնել Շնող և Թեղուտ համայնքներում: 2015թ. աշնանն արդեն իսկ Շնող համայնքում շուրջ 10 հա տարածքի վրա իրականացվել են պտղատու այգիների հիմնման աշխատանքներ: 2016թ. նույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է ևս 10 հա պտղատու այգիների հիմնում:

Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ մարզի համայնքներում տնկվել է շուրջ 30 000 տնկի:

Ընդհանուր առմամբ 2015թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 105 հա անտառտնկման և նախորդ տարիներին հիմնադրված 930 հա անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:

ՀՀ պետական բյուջեից Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Համայնքներ	Տարիները				
	2012	2013	2014	2015	2016 – նախատեսված
Ալավերդի	94 411.5	110 000.0	120 000.0	94 677.0	--
Հաղպատ	23 602.8	25 000.0	27 000.0	27 470.6	--
Օձուն	23 602.9	58 664.8	12 498.4	7 511.4	47 918.2
Աքորի	23 602.8	28 000.0	30 000.0	20 862.2	--
Հազվի	8 000.0	50 000.0	30 000.0	-	--
Ախթալա	1 500.0	3 500.0	4 500.0	-	4 588.2
Ընդամենը	174 720.0	275 164.8	223 998.4	150 521.2	52 506.4

Աշխատանքներ են տարվում, որպեսզի Ստեփանավան, Ուրասար, Թեղուտ և Շնող համայնքները նույնպես ստանան բնապահպանական սուբվենցիաներ:

Ընթացքի մեջ է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագիրը ենթադրում է Լոռու մարզում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան 3 աղբավայրեր:

Ընթացքի մեջ է Ալավերդու մկնդեղի գերեզմանոցի անվտանգությունն ապահովող միջոցառումների նախագծա-նախահաշվային աշխատանքները: